ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ սեպտեմբերի 1-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 22 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասը, աշխատանքի տեղավորման ութ, պատերազմի հասցրած վնասի փոխհատուցման, հողամասի սահմանի ճշտման, բիզնես ծրագրով համագործակցության, դպրոցի դասարանի անվանակոչության հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից իննին տրվել է դրական լուծում, մեկը՝ մերժվել է:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են պատերազմի հասցրած վնասի փոխհատուցման, հողամասի սահմանի ճշտման, բիզնես ծրագրով համագործակցության, դպրոցի դասարանի անվանակոչության վերաբերյալ դիմումները: